

ՍԵՎԱՆԻ ԼՃԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ



այլակերպ ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի Պետական պատմական թանգարանի մի խումբ գիտական աշխատողներ

վերջերս հնագիտական պեղումներ կատարեցին Նոր Բայազետի շրջանի Մուխան գյուղի մոտ: Այստեղ Սևանի լճի ցամաքած տարածության վրա, որը կազմում է 500—700 քառակուսի մետր, բացվել են ավելի քան 80 դամբարաններ: Դամբարանները պատկանում են միմյանցից բավականաչափ հեռու երկու ժամանակաշրջանների:

Դամբարանների առաջին խումբը, որոնց հնությունը հաշվվում է 2700—3000 տարի, պատկանում են քարակալային սիստեմին, ունեն 2—3 մետր երկարություն և մինչև մեկ ու կես մետր խորություն:

Նույն տարածության վրա գտնվում է դամբարանների երկրորդ խումբը, որը շատ ավելի հին է: Այս խմբին պատկանող դամբարաններն առաջացել են մոտ 5500-ից մինչև 6000 տարի սրանից առաջ: Այս դամբարաններն ունեն բոլորաձև շարվածք (շրջանաձև 5—8 մետր տրամագիծ, մեկից մեկ ու կես մետր բարձրություն): Դամբարաններից չորսը դեռևս չեն կորցրել իրենց նախնական տեսքը և պահպանում են իրենց վրա կանոնավոր դասավորված անհամար քարերից կազմած բուրգերը: Այս դամբարանների թիվն անցնում է 30-ից, բայց մի մասը դեռևս դուրս չի եկել ջրի տակից, որոնց պատերի շրջանները պարզ երևում են ջրի մեջ...

Այս դամբարանադաշտից 700 մետր դեպի հարավ, դարձյալ լճի ցամաքած տարածության վրա, բացվել են շրջանաձև սենյակների և ուղիղ շարվածք ունեցող պատերի մնացորդներ: Այս կառուցվածքները ժամանակակից են դամբարաններին:

Պեղումներից պարզվեց, որ այստեղ ապրող տեղաբնիկ տոհմերն ու ցեղերը սկզբնական շրջանում վարել են կիսաքոչվորական, իսկ ավելի ուշ՝ նստակյաց կյանք: Ինչպես

ցույց են տալիս պեղումների ժամանակ գտնված բազմաթիվ նետերն ու սլաքները, այնպես էլ մանր եղջերավոր անասունների ու ձիերի ոսկորները, նրանք զբաղվել են որսորդությամբ և անասնապահությամբ:

Ուշագրավ է, որ դամբարաններում գտնվել է նաև լավ պահպանված մի երկաթե դանակ, որը վերաբերում է վաղ երկաթի շրջանին: Գտնվել են անազապղնձե (բրոնզ) մեծ քանակությամբ տարբեր տեսակի իրեր, այդ թվում՝ անազապղնձե գոտու մնացորդներ, բազմաթիվ ապարանջաններ, որոնցից երկուսի մեջ գտնվել են ննջեցյալի բազուկի ոսկորները: Այդ ապարանջանները կշռում են 250—300 գրամ, ունեն տարբեր ձևեր: Գտնված իրերի մեջ կան նուրբ արվեստով ծարիրե մի մատանի, նիզակի երկաթյա ծայրեր, որ ցույց է տալիս երկաթի հազվագյուտ լինելն այդ շրջանում: Գտնված իրերի խմբում առանձնապես աչքի են ընկնում բազմատեսակ և մեծ քանակությամբ ուլունքներ, որոնց մեջ կան ոսկու նուրբ թիթեղից պատրաստված փոքրիկ ուլունքներ ու նրանց մնացորդներ:

Ուշագրավ է նաև հայտնաբերված կացինը, որը ուլունքների հետ գտնվում էր ննջեցյալի պարանոցի մոտ: Դամբարաններից գտնված իրերի մեջ առանձին տեղ են զբաղում կալի գարդարուն և անզարդ ամանները, որոնցից մի քանիսի մեջ կան ննջեցյալների համար դրված ուտելիքներից մնացած ոսկորները:

Բոլոր դամբարաններում թաղված են 3—5 հոգի, կուշ եկած, թևերը և ոտքերը ծալած վիճակում: Ուլունքներով զարդարված են ննջեցյալներից մի քանիսի պարանոցը և բազուկները:

Կատարված պեղումները ցույց են տալիս, որ հազարամյակներ առաջ Սևանի լիճը եղել է շատ ավելի փոքր, քան այժմ, որ լիճը բարձրացել է հավանաբար միայն վերջին դարերում և իր տակն է առել ո՛չ միայն դամբարաններն ու գետնադամբարանները, այլ նաև այդ դամբարաններն ստեղծող տոհմերի ու ցեղախմբերի բնակատեղիները:

